

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.
 Առանձին համարները 5 կոպեկով:
 Թիֆլիսում գրվում են միմյանից Խմբագրատան մեջ:
 Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
 Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առևտուրի 10—2 ժամ
 (Բացի կիրակի և տոն օրերից)
 Ֆայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
 Ֆայտարարութիւնների համար, գնաճում են
 իւրարանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Օրէնքի ոյժ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Օտար
 և հայ մասուլիս հայոց խնդիր վերաբերութեամբ:
 Նախակ Ախալքալաքից: Նախակ Յարիցկից:
 Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ան-
 գլխա: Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—ՅԱՅ-
 ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ներ-
 սիսեան դպրոցի տարեգրքի աւելիում:

ՕՐԵՆՔԻ ՈՅԺ

Երբ յարուցվեցաւ Ռուսաս-
 տանի թէ մասուլիս ու հասարա-
 կական կարծիքի մէջ, թէ բարձր
 պետական շրջաններում տպագրա-
 կան օրէնքի վերաքննութեան
 խնդիրը, մի և նոյն ժամանակ
 յարուցվեցաւ և այն խնդիրը թէ
 արդեօք, ուսաց ընդհանուր
 օրէնքների հիման վրա, կարող է
 վարչութիւնը առանց դատաս-
 տանի վճռի պատժել յրազրի
 կամ ամսագրի խմբագրին, կարող
 է դադարեցնել հրատարակու-
 թիւնը մշտապէս կամ ժամանա-
 կաւորապէս, կարող է տուգանք
 վերցնել հրատարակողից: Արդեօք
 առանց դատարանի վճռի վար-
 չութեան կողմից այդ բոլոր ա-
 րածները օրինական են, թէ մի-
 միայն կամայականութեան վրա
 են հիմնված:

Այդ բոլոր հարցերին պատաս-
 խանք շատ պարզ է. նոյն իսկ
 ուսաց օրէնքների ճիշդ հիման
 վրա վարչութիւնը ոչ մի քաղա-
 քացուն պատժել չէ կարող, նրա
 որ և է յանցանքի համար, ա-
 ռանց դատարանի վճռի: Այս-

չութիւնը պէտք է դատարանի
 միմիայն կատարող ոյժը լինի,
 իսկ այդ դիպուածներում գործել
 առանց դատարանի թոյլտու-
 թեան, առանց նրա վճռի, —
 կատարել կամայականութիւն է:
 Նոյնանման մի խնդիր յարուց-
 վել է նորերում Ս. Պետերբուրգի
 ազնւականութեան նախնական
 ժողովի մէջ վարչութեան կար-
 գազրութեամբ աքսորվածների
 վերաբերութեամբ:

Փետրվարի 17-ին, Ս. Պետեր-
 բուրգի ազնւականների ժողովի
 մէջ Հակեկել Տաշտարաբ գատա-
 ւորը յարուցեց այն խնդիրը, թէ
 ուս. օրէնսդրութեան հիման
 վրա վարչութիւնը իրաւունք ունի
 արդեօք աքսորել քաղաքա-
 ցուն առանց դատարանի վճռի:
 Այժմ վարչութիւնը գործ է դը-
 նում օրէնքով չը թոյլ տուած,
 օրէնքի ուղուն և իմաստին հա-
 կառակ միջոցներ, վարչութեան
 այդ տեսակ վարմունքը պէտք է
 համարվի կամայականութիւն, ա-
 սեց Հակեկել:

Քաղում ենք «ПОРЯДОКЪ»
 լրագրից Հակեկելի ճառի բովան-
 դակութիւնը:

Հասաւ ժամանակ, ասեց ա-
 տենաբանը, երբ Ռուսաստանի
 ազնւականութիւնը պէտք է ան-
 կեղծ և բացարձակ կերպով ար-
 տայայտի կառավարութեանը իր
 հայեացքը այնպիսի երևոյթի
 վրա, որ կազմում է ուսաց
 կեանքի ախտը և որից պէտք է

աշխատել, որքան հնար է, շու-
 տով ազատվել: Ռուսաց օրէնս-
 դրութեան և մասնաւորապէս
 1864 թւի օրէնքների զորու-
 թեամբ ամեն տեսակ պատիժներ
 նշանակվում են միմիայն դատա-
 րանի վճռով: Երբ որ այդ օրէնք-
 ները հրատարակվեցան, ստորա-
 գրված լինելով թագաւոր Այսյսրի
 անունով, թէ Այսյսր և թէ
 ուսաց հասարակական կարծիքը
 ողջունեցին այդ խաղաղ վերանո-
 րութիւնը, որպէս մի մեծ քայլ
 դէպի Ռուսաստանի վերածնու-
 թիւնը, այն ինչ Այսյսրայում
 այդ տեսակ վերանորոգութիւն-
 ները ձեռք էին բերվում արիւնի
 գնով: Ռուսաց հասարակու-
 թեանը շորհվեցաւ ինքնավա-
 րութիւն, նրա վրայից վերցվեցաւ
 կառավարութեան ինստիտու-
 թիւնը, ուս. քաղաքացու անձ-
 նաւորութիւնը ապահովվեցաւ աղ-
 միստորացիայի կամայականու-
 թիւնից: Ինքն պետական խոր-
 հուրդը, երկրի ամենաբարձր հիւ-
 նարկութիւնը, այն կարծիքն էր
 յայտնում, որ վարչութիւնը,
 որի պարտաւորութիւնն է վերա-
 հակել օրէնքի ճիշդ կատարման
 վրա, չէ կարող մի և նոյն ժա-
 մանակ նշանակել որ և է պա-
 տանց դատարանի վճռի նշանակ-
 վող պատիժները, մի կամայական
 գործողութիւն է, որին պէտք է
 վերջ դրվի: Այդպիսով վարչա-
 կան աքսորանքը չունի ոչինչ

հաստատ հիմք օրէնսդրութեան
 մէջ, ուրեմն նա օրէնքից դուրս,
 ապօրինի գործողութիւն է, վար-
 չութեան կամայականութիւն է:
 Այժմ քան տաս տարի շարու-
 նակ Ռուսաստանը գտնվում էր
 մի դրութեան մէջ, որ տարբեր էր
 այն դրութիւնից, որ մեզ շորհ-
 ված էր օրէնքով: Այսչութիւնը
 մաքրելով Ռուսաստանը սոցիա-
 լիստներից, այնպիսի միջոցներ էր
 գործ դնում, որոնց կարելի է
 անուանել միմիայն կամայակա-
 նութիւն բառով: Ռուսաց քա-
 ղաքացիներ բանտարկվում էին ա-
 ռանց դատարանի վճռի և քրն-
 նութեան, մինչև անգամ աք-
 սորանք էին ուղարկվում առանց
 դատարանի վճռի: Այդ տխուր
 ժամանակներում, շարունակեց
 Հակեկել, կային մարդիկ որոնք
 փորձեցին ընդդիմադրել կամայա-
 կանութեանը, — բայց ի զուր:
 Հասարակութիւնը յոգնեց և
 անտարբեր դարձաւ. իր շրջանի
 միջից այս կամ այն անձի կո-
 րուստը այլ ևս չէր զարմացնում
 նրան: Ամենից շատ տանջվեց
 անչափահաս երիտասարդութիւ-
 նը. այս կամ այն մարդու հետ
 ծանօթ լինելու համար, մի ան-
 զգոյշ խօսքի համար նամակի
 թէ խօսակցութեան մէջ նշա-
 նակվում էին շատ անգամ ամե-
 նաւոր պատիժներ՝ աքսորանք
 դէպի հեռու նախնական, դէպի
 Սիբիր: Արգրութեան բողոքը
 անզոր էր այդ կամայականու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԻՆԱՐՔԻ ԱՌԻՔՈՎ

Փետրվարի 14-ին, շաբաթ օրը, Ներսիսեան
 դպրոցի հոգաբարձութեան կարգադրութեամբ
 կատարվեցաւ Ամսքի մայր եկեղեցում դպրոցի
 հիմնադիր Ներսիս և Կաթողիկոսի հոգեհան-
 դիստը՝ ներկայութեամբ դպրոցի աշակերտների,
 ուսուցիչների, հոգաբարձուների և սակաւաթիւ
 ժողովրդեան, որը կարելի է բացատրել մասամբ
 տեսչի մի օր առաջ միայն հրատարակելով հան-
 դիսի մասին, և այն, միայն մի լրագրում Պա-
 տարագիւ Վերսիսի վարդապետը զօրեղ ձայնով
 բացատրեց Ներսիսեան դպրոցի բարձր նշանա-
 կութիւնը և անմահ հիմնադրի գաղափարները—
 Հոգեհանդիստը կատարվելուց յետոյ, ժողովուրդը
 դիմեց Ներսիսեան հին դպրոցի դռնին՝ լսելու
 դպրոցի ուսումնական և տնտեսական հարցաւոր-
 ւթիւնը, Նախ ամբիսն բարձրացաւ դպրոցի հայոց
 լեզուի ուսուցիչ պ. Մ. Պալեանը և խրթին գրա-
 բար լեզուով կարգաց մի ուղերձ, որի բովանդա-
 կութիւնից, տարաբարբար, իր անմասնելիութե-
 թեամբ, ոչինչ օգուտ չը քաղեց հանդիսական-
 ների հազմութիւնը: Գրանից յետոյ ուսումնա-
 կան հաշիւը ներկայացնելու համար՝ բարձրացաւ
 ամբիսն դպրոցի տեսչի պ. Արշակ Նահապե-

տեանը: Միջոցով պ. տեսչը չեղցից իր խնդ-
 րից և դրազմած էր զանազան անտեղի և կողմ-
 նակի չար ու բարիքով, որի մասին կը յիշենք
 ներքեւ: Վերջը պարտքը յայտնեց, որ դպրոցը
 1879/80 ուսումնական տարում ունեցել է 11
 դասատուն, որոնցից 3-ը պարաստակաւորներ և
 6-ը կանոնաւոր դասատուներ, երկու առաջին
 և երկու երկրորդ դասատուները դասատուներով:
 Բոլոր աշակերտների թիւը—382, որոնցից 29-ը
 որդեկրներ և մի այդքան էլ 7 ռուբլ ստացող
 թոշակաւորներ (ստիպենդիաւ), գործող անձինք
 դպրոցում եղել են բացի 12 հոգաբարձուներից—
 18 ուսուցիչ, 3 վերակացու և մի տեսուչ, իսկ
 աւարտող աշակերտների թիւը 1879/80 տարում
 եղել է 6 (!) *): Գրանից յետոյ, հերթակալ հո-
 գաբարձու պ. Ա. Բաբայանը բաւականի թոյլ
 կերպով կարգաց դպրոցի և և մուտքի հաշիւը:
 Այդ հաշիւից երեքեւ, որ դպրոցի ընդհանուր
 մուտքը եղել է 1879/80 տարում՝ 43849 ռ. 65 կ.,
 իսկ ընդհանուր ծախքը՝ 54532 ռ. այդ գումարից
 միայն դպրոցը և պատիւնը պահելու համար
 ծախսվել է 34700 ռ., իսկ մնացած 19832 ռ.
 65 կ. գործ է դրվել դպրոցի յաւելում շինու-
 թեանց և դպրոցապատկան զանազան վանքերի,
 *): Աւարտող աշակերտների թիւը իսկապէս
 12 էր, դրանից միայն 6-ը արժանացան վկայա-
 կանների, իսկ մնացած կէսը իրանց թուլութեան
 համար չը ստացան վկայականներ, և այս բանի
 համար պ. տեսուչը երկի ամաչեց յիշելու:

ուսումնականների, կրպակների և այլ նորոգմանց
 համար: Պարտքը յայտնեց, որ նախահաշուով
 դպրոցին, ընդհանուր ծախսի համար, միջին թուով
 հարկաւոր է 42966 ռ., այսինքն մուտքից 883 ռ.
 պակաս. այս աւելորդ գումարով և զանազան
 նուիրատուութիւններով հոգաբարձութիւնը մու-
 դիւր է ծածկել դպրոցի 10683 ռ. պարտքը (54532
 —43849): Հանդէս վերջացաւ վանքի Միսրոպ
 վարդապետի ատենաբանութեամբ: Թողնելով
 հաշուի երկրորդական մասնամասնութիւնները՝
 դատարանը տեսչի վերջինից անտեղի զրոյցնե-
 րին: Պարտքը իր հաշիւը սկսեց երկար ու բարակ
 յայտնելով այն բոլոր կարծիքները, թէ ծխական
 դպրոցները անբարեկարգ դրութեան մէջ են, թէ
 այնտեղ կանոնաւոր ուսումն չէ աւանդվում, ա-
 նոգուտ են, նրա համար, որ ծխական դպրոցի
 աշակերտները չեն կարողանում մտնել Ներսի-
 սեան դպրոցի առաջին դասատուներին և թէ
 հոգաբարձութիւնը մի մեծ գործ է կատարել
 գանձարանից 2400 ռուբլ ծախսելով և դպրոցին
 երեք պարաստակաւոր դասատուներ աւելացնելով...
 Կատկած չը կայ, որ պ. տեսուչը քարոզելով
 ծխական դպրոցների անառաջագիմութիւնը, շօ-
 շափում է դրանով և նրա ուսուցիչների պա-
 տիւր է հեռու չը գնալով, ուղիղ է արդեօք
 պ. տեսչի այդ պարաստանքը, տեսնենք:
 Ա) Մեր ծխական դպրոցները, ինչպէս յայտնի
 է, դպրոցի անունը վայելեցին այն ժամանակ,
 երբ հաստատվեցաւ թեմական տեսչութիւնը:
 Գոնված մի քանի եռապատիկ և քառապատիկ
 Ներկայ թեմական տեսուչը արդէն երրորդն է,

բայց մինչև այսօր հաստատապէս սկզբունքով չէ
 վճռվել այն խնդիրը թէ ծխական դպրոցները
 Ներսիսեան դպրոցի նախակրթարաններն են, թէ
 ինքնուրոյն, առանձին ուղղութեամբ և առան-
 ձին ծրագիր ունեցող հիմնարկութիւններ: Այժմ
 պարտն տեսուչը, որը 10 տարի թիֆլիսում զբո-
 յոյցական գործի մէջ է պատվում, այդ մասին
 ոչինչ չէ լսել, ապա մինք պէտք է յայտնեք
 պարտնին, որ այդ խնդիրը նախկին թեմական տե-
 սուչ պ. Տէր-Յովհաննիսեանի օրով վերջին կեր-
 պարանքն ունէր, հիմնվելով այն երևոյթի վրա,
 որ մեր ծխական դպրոցների աշակերտները մեծ
 մասամբ 2—3 տարի սովորելուց յետոյ՝ թողնում
 են դպրոցը և գործի են կանգնում՝ ընտանիքին
 օգնելու մտքով: Արանից հետեւում է այն, որ
 ծխական դպրոցի աշակերտները լինելով շատ ան-
 դամ աւելի զարգացած և աւելի հարուստ գործ-
 նական կեանքի տեղեկութիւններով, չեն կարողա-
 նում մտնել Ներսիսեան դպրոցի առաջին դասա-
 տուներ—բառ առ բառ տերտած չը լինելով դպրո-
 ցում գործ դրվող դասադրերի կէտերը և քննու-
 ճների հարցմունքները: Էլ հարկաւոր չէ յիշել, որ
 ծխական դպրոցի ուսուցիչների ցուցակում կա-
 թիւի է կարգաւ և այնպիսի բարեխիղճ և իրանց
 գործին նուիրված անձնաւորութիւններ, որոնց
 առաջ շատ հեշտ կերպով մտնում են Ներսի-
 սեան դպրոցի, մասնաւոր վերջին տարիների,
 անփոփոխ հոգաբարձուների պրոտեկցիայով ըն-
 դոնված մի քանի եռապատիկ և քառապատիկ
 ուսիկ խժոռոններ...

Թեան դէմ, նա շարունակ ածում էր և շատ ժամանակ է, աւելացրեց ատենաբանը, հասած էր իր զարգացման ամենաբարձր կէտին: Կար ժամանակ, և այդ ժամանակը շատ հեռու է, երբ դատարանի ձեռքով արդարացրած անձինք, դարձեալ աքսորվում էին վարչութեան կարգադրութեամբ:

Նշողով Հակէկի սկսեց բացատրել, թէ որքան վնասակար էին այդ միջոցները, որքան կորուստներ կերպով ազդում էին նրանք երիտասարդութեան բարոյականութեան վրա, դառնացնելով նրանց սրտերը ընդդէմ կառավարութեան: Նմիտ, խելագար միջոցներին, սպանութեան հարսնեքին դիմող պատանիները, Հակէկի կարծիքով, երևի հետեւեալ դատողութիւն էին անում. «մեզ հետ վարվում են ապօրինի կերպով, մենք էլ ուրիշների հետ կը վարվենք ապօրինի կերպով:»

Կրանից յետոյ Հակէկ առաջարկեց ազնւականութեանը, հիմնվելով օրէնքի 143 յօդուածի IX հատորի վրա, դիմել Կորին Մեծութեանը Թագաւոր Կայսրին ամենախոնարհ խնդիրքով վերականգնեցնել օրէնքի ոյժը, որով ապահովվում է իւրաքանչիւր ուսւ քաղաքացու անձնաւորութիւնը:

«Նրեակայեցէք, պարոններ, որքան մեծ ուրախութեամբ ամբողջ Ռուսաստանը կընդունի օգոստոսական Կայսրի հրամանը, երբ մենք ամենքս կրկին միջոց կունենանք ընդունել մեր ընտանիքներում Ֆիզիկապէս սպառնալից, բարոյապէս տանջված հարիւրաւոր քաղաքացիներին:»

Նշող խօսքերով վերջացրեց Հակէկ իր ճառը և ազնւականութիւնն ու ժողովին ներկայ

գտնված հանդիսականները վարձատրեցին ատենաբանին ողևորված ծափահարութիւններով:

Ժողովը որոշեց. ճանաչելով որ վարչական աքսորանքը օրէնքի վրա հիմնված է, և ձեռնարկելով օրէնքի 143 յ. IX հ. մէջ ազնւականութեանը շորհչված իրաւունքով, ամենախոնարհ խնդիրք մատուցանել Կորին Կայսերական Մեծութեանը, յայտնելով որ ուսւ քաղաքացու անձնաւորութիւնը ապահովող օրէնքը խախտված է:

Թագաւորին ներկայացնելու խնդիրքի կազմելը յանձնված է Հակէկին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՏԱՐ ԵՒ ՀԱՅ ՄԱՍՈՒՐԸ «ՀԱՅՈՑ ԽՆԳՐԻ» ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

Ինչո՞վ պիտի վերջանայ «Յունաց խնդիրը». դիվանաների երկար ու բարակ, խորամանկ ու զգոն հարցադրակցութիւններով, թէ սորա վճիռ ստանալը կախված է երկու հակառակորդների սուրիններից: Այս հարցերումն է բովանդակվում այժմ «արեւելեան խնդրի» օրական չարիքը, որը, վերջանալով, սեղ պիտի տայ մի ուրիշ չարիքին, այն է՝ «Հայոց խնդրին»: Այս վերջինը ինչ ընթացք պիտի առնի, երբ հերթը նորան հասնի, որպիսի միջոցներով պիտի իրագործվի հայի պահանջը—ծածկված է անպայուսելի մտայնով:

Ունի՞ արդեօք Հայաստանը այն միջոցները, որով Չերնոզորիան հասաւ իր նպատակին և որով այժմ Յունաստանը ձգտում է ստանալ իր ուզածը: Չերնոզորիան և Յունաստանը ունեն իրանց պետութիւնները, որոնք պիտի հոգս քաշեն իրանց երկրի ինտերեսները վրա, որոնք, տեղը եկած ժամանակը, կարող են բողոքել Եւրոպայի առաջ մի անիրաւ թշնամու դէմ և որոնք, վերջապէս, եթէ հարկաւոր է, սուրիններ կարող են առաջ դնել:

Մի քանի տարի սորանից առաջ բոլգա-

ւազք մի և նոյն միջակի մէջն էին, որի մէջ տանջվում են մինչև այժմ հայերը, կրկով արիւնարբու մահաճեական բարբարոսներից անգթութիւններ ու դազանութիւններ... Ինչպէս այնտեղ էր, նոյնպէս էլ Հայաստանում՝ բռնաբարվում են կանայք ու օրիորդներ, հազար մի տեսակ տանջանաց ու կոտորածի են զոհ դառնում ծերերը, տղամարդիկ ու երիտաւր, զիւղերը ու կալուածքները կողպտվում, եկեղեցիքը քանդվում ու պղծվում... Հայաստանի կրօնականքը եթէ աւել է, ոչ մի բանով էլ պակաս չէ Բոլգարիայի անցեալ կսկծանքից: Բոլգարիայի կոծը լսեց Եւրոպան, արդեօք Հայաստանին էլ կը լսի...»

Մինչև երեսուն չը լայ, մայրը ծիծ էի տայ, ասում է առածը: Ուրեմն ո՞ք է այն միջոցը, որով կարողանար լսել Հայաստանի լացը Եւրոպայի հասարակութիւններից հէնց մէկը: Որտե՞ղից նա պիտի քաղի ծանօթութիւն թիրքիաբնակ հայի դժբնդակ կեանքի վրա: Ասենք, նորա այս թէ այն լրագրում ժամանակ առ ժամանակ երեւան են գալիս նամակներ Հայաստանից, բայց այս նամակները կամ պատահական թղթակցիցներին են, կամ յօրինած բերանից բերան անցնող համբաններից, կամ սրա նրա մասնաւոր նամակից, և, անշուշտ, այսպիսի դիպուածներում բանաստեղծութիւնը աւելի մեծ տեղ ունի, քան թէ իրողութիւնը: Հմուտ ընթերցողը միշտ խելամուտ է լինում այսպիսի նամակներին և գնահատում է նոցա յատկութեանց համեմատ: Այդ բաւական չէ. վերջին ժամանակներում ոմանք սովորութիւն են առել երբեմնապէս հայ լրագիրներից ուսւ լրագիրների համար մի քանի տող թարգմանութիւններ անել: Բայց այդ թարգմանութիւնները շատ անգամ անզգոյշ կերպով են կատարվում: Յոյս տալու համար, բաւական է մտաբերել, կարծեմ «Մերեւից», «Толость»-ի մէջ թարգմանած մտաւորապէս հետեւեալը. «Ուրմի այլի հայ երը, իմանալով ծածոկ ճանապարհով քիւրդերի յարձակումն երի մասին, կարողացան իր ժամանակին փախչել և ազատվել պարսիկների ու ալաուօրիների կրած վիճակից»: Աւելորդ է պարզել, թէ այսպիսի տողերից ինչ գաղափար պիտի կազմի մի օտար

ազգ հայի վրա: Կրան կասեն արջային ծառայութիւն: Այսպիսի աղբիւրներից ստացած լուրերի վրա են հիմնվում այն մի քանի առաջնորդող յօդուածները, որոնք ձառում են հայ ազգի վերաբերութեամբ: Հայոց խնդրի համար այսպիսի պրօպագանդան, եթէ կարիք է այս անունը տալ նորան, միայն վնաս կարող է տալ:

Օտար ազգի լրագիրների համար այժմ ձեռնտու չէ ուղարկել Հայաստան իրանց սեփական թղթակցիներին, որոնք հոչակութեան մէջ և յայտնի լինելին ընթերցող հասարակութեանը: Այսպիսի թղթակցիք խմբագրութեանը կարժեհայ, բացի սորա գրածների տողավարձից, ամսական մինչև 500 ռուբլ ճանապարհորդութեան կարիքների համար: Այս ծախքը չէ անի ոչ մի խմբագրութիւն, երբ օրական ինտերեզը Հայաստանը չէ և իր լրագիրը, հետաքրքիր լինելու համար, այլ նիւթեր է պահանջում: Ուրիշ բան է, երբ գրողը ստանար լրագրից միայն իր տողավարձը, այն ժամանակ ամեն մի լրագիր մեծ ուրախութեամբ բաց կանէր իր էջերը նորա գրածի համար: Ահա՛ օտար պարբերական մամուլի բռնած դիրքը հայոց խնդրի վերաբերութեամբ:

Ինչ կարող է անել հայ մամուլը, երբ «հայք են անգրասէրք», երբ հայի նոյն իսկ բնաւորութեան յատկութիւնը մինչև այժմ—տասնու երեք դար միջոցում—մնացել է առանց մի որ և իցէ փոփոխութեան: Նա մէկ քայլափոխ անգամ չէ արել այդ նախատիւքի շրջանակից դուրս գալու համար՝ նա անգրասէր էր և մնացել է մինչև այժմ անգրասէր... Նորա պարբերական մամուլի նիւթական չքաւորութիւնը արդեօք չէ՞ պացուցանում այդ: Այս չէ՞ պատտալու համար, բաւական է մտաբերել, կարծեմ «Մերեւից», «Толость»-ի մէջ թարգմանած մտաւորապէս հետեւեալը. «Ուրմի այլի հայ երը, իմանալով ծածոկ ճանապարհով քիւրդերի յարձակումն երի մասին, կարողացան իր ժամանակին փախչել և ազատվել պարսիկների ու ալաուօրիների կրած վիճակից»: Աւելորդ է պարզել, թէ այսպիսի տողերից ինչ գաղափար պիտի կազմի մի օտար

Բ) Չը նայելով վերոյիշեալ պայմաններին, ծրխական դպրոցներից Ներսիսեան դպրոցում մը տած աշակերտները աւելի զարգացած և աւելի յառաջադէմ են, քան իրանց պատրաստականներից մտաները. այս բանը հաստատվում է թէ՛ դպրոցի ցուցակների վիճակագրական թուելում և թէ՛ նոյն իսկ դպրոցի ուսուցիչների միաձայն վկայութիւններով ուսուցչական ժողովներում: Այս երևոյթը ինքն ըստ ինքեան վկայ է ծխական դպրոցի ուսուցիչների գործունէութեան, որոնք մասին հրապարակաւ սե քար գցեց պ. տեսուչը:

Գ) Հիմա ցանկալի կը լինի իմանալ թէ՛ որքան ծխական դպրոցներ ունենք մենք (աղայոց) Թիֆլիսում, և ինչպէս են վարձատրում նրանք իրանց ուսուցիչներին, համեմատելով Ներսիսեան դպրոցի պատրաստականների հետ: Հաւաքարում կայ հետեւեալ աղայոց դպրոցները. 1) Իգմիրեան դպրոցը սուրբ Մինասայ դաւթում, տարեկան 500 ռուբլ ուսուցիչներին, 2) սուրբ Կարապետի, 3) Շամբորեցոց, 4) Չորաբաշի սուրբ Գեորգայ, 5) Լուսաւորչայ—Վերջին չորս դպրոցները տարեկան միջին թւով կարող են վարձատրել 100—120 ռ. *), այնուհետև 6) Չուղուրեթու սը-

*) Պ. տեսուչը կարող է անձամբ հաւաքել վերոյիշեալ տեղեկութիւնները, որպէս զի միւս անգամ չը մոլորվի չՀաւաքարում միայն մի աղայոց դպրոց կայ՝ աւելով Ներսիսեան դպրոցից Հաւաքար կարող է հասնել անվտանգ 16 ռուպլով:

դպրոց դպրոցը սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ գաւթում տարեկան 150 ռ. վարձատրութեամբ, 7) Կուկիոյ նորաբաց Միղդայեան դպրոցը երկու դաստան, տարեկան իւրաքանչիւր դաստան համար 350 ռ. վարձատրութիւն, 8) Ջըրաշէնի տղայոց դպրոցը տարեկան 600 ռ. վարձով (այն ես այս տարի միայն) և 9) սուրբ Գեորգայ Կաթողիկէ եկեղեցոյ աղայոց դպրոցը երկու դաստան համար տարեկան 1200 ռ., կամ իւրաքանչիւր դաստան համար 600 ռ., ուրեմն ընդամենը 9 դպրոց, 11 դաստանով տալիս է իր ուսուցիչներին 3550 ռ., կամ իւրաքանչիւր դաստան համար տալիս է 322 ռ., իսկ Ներսիսեան դպրոցը երեք պատրաստականի համար ծախսում է 2400 ռ., կամ իւրաքանչիւր պատրաստական դաստան վրա 800 ռ. այսինքն համարեայ 500 ռ. աւելի ամեն մի ծխականից: Այս ցուցակից պարզ երևում է, որ 9 դպրոցից միայն երկուսը կարողանում են, քիչ թէ շատ, բաւարար կերպով վարձատրել իրանց ուսուցիչներին, իսկ մնացած 7 ծխական դպրոցները այնպէս ողորմելի ուժեղ են տալիս իւրեանց ուսուցիչներին, որ վերջիններից աւելի պահանջելը առ նուազն—անմտութիւն է: Յիշելով Ներսիսեան դպրոցի իւրաքանչիւր պատրաստական դաստան 800 ռուբլին, մենք ընաւ չենք պատկանում այն մարդկանց կարգին, որ այդ ուժեղ բաւարար համարեք պատրաստականի ուսուցիչներին. ընդհակառակն ընդունելով պատրաստականները իբրև հիմք բարձրագոյն դաստանից—մենք շատ

լու զգում ենք այն դժուարութիւնները, մանկակարծական գիտութիւնը և փորձառութիւնը, որ պիտի ունենան պատրաստականների ուսուցիչները: Այս կէտից նայելով մենք ոչ թէ 800 ռ., այլ մինչև 1200 ռ. ես քիչ ենք համարում տարբերակն ուսուցիչներին. բայց մի և նոյն ժամանակ համեմատելով Ներսիսեան դպրոցի պատրաստականների ուժեղ ծխականների հետ, չէ կարելի ուրանալ այն պարզ ճշմարտութիւնը, որ 800 ռուբլով աւելի կարելի է լուս ուսուցիչ գտնել, քան սղորմելի 100, 150, 300: կամ մինչև անգամ 600 ռուբլով և եթէ ծխականները վերոյիշեալ նկարագրութեան նմանվին, զարմանալի էլ չէր լինի. չը նայելով որ, ինչպէս վերը ցոյց տուինք, մեր ծխականները այնպէս թույլ չեն իրանց սանձամներում, ինչպէս կամաւ կարծում է պ. տեսուչը և ընդհակառակն նրա աշակերտներն են կազմում Ներսիսեան դպրոցի առաջին դաստան յառաջադէմները և զարգացածները—Ո՛չ թէ այն է պարտաւելի՝ որ մեր ծխականները անբարկարգ են, որին նիւթապէս բարբեթելու համար շատ ոյժեր և աշխատանք է նարկաւոր, այլ աւելի այն է զարմանալի, որ պ. տեսուչը զարգեցրել է 12 հոգաբարձուներին, 18 ուսուցիչներին և 3 վերակարգներին, մտնելով դպրոցի գանձարանից 34,700 ռուբլ նրա համար, որ ընդամենը 6 աշակերտ արտադրէ, որան կասն, պարոններ, ԵՐԱ ՐՈՃԱՅ ՄԻՍԻՆ ԳՈՆԵ 7—8 տարի առաջ, ուրեմն աւելի յետին ժամանակում, երբ աւելի քիչ էր ծախքը, այդ

քան նեղ չէր դպրոցի յառաջադիմութեան սանձանը և այդքան քիչ չէր աւարտողների թիւը...

Վերջացնելով յօդուածը մենք պարտաւորութիւն ենք համարում առաջարկել Ներսիսեան դպրոցի պատուելի հոգաբարձութեանը, որ նա պատրաստականների 2400 ռուբլին յանձնէր թեմական տեսչին գործադրելու թիֆլիսի գահազան թաղերի դպրոցներին ուսուցիչաբար մանկանց վրա՝ մտնելով համարաչի համաձայնութեան մէջ՝ գտնել մտաւորապէս, եթէ կարելի է, յարմարացնելու ծխական դպրոցներին ծրագրելու Ներսիսեան դպրոցի պատրաստականների ծրագրին. այս կերպով կօդովին հարկաւոր մանուկներ գանազան թաղերի և կը գոյանայ բաւականին մեծ թիւ Ներսիսեան դպրոցի առաջին դաստանները մտնելու, որով հոգաբարձութիւնը ես աւելի կը մտնեայ անուս հիմնադրի նախադժած գաղափարներին:

Մենք մտապանք յիշել, որ պ. տեսուչը իր ճառի մէջ օրիորդական դպրոցներ վրա ես մի և նոյն գաղափարն էլ կազմել, յայտնելով, որ բացի Վայրիսեան և... Յովնանեան (?!) դպրոցները ուրիշ կանոնաւոր դպրոցներ չը կան: Այս խնդիրը թողնում ենք առժամանակ հետեւեալ համարներին:—

պատճառ, որ մեր գրողը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գրականական շիւղիւն ուր... Մեր գրականական կամուրջները, նիւթական միջոցներ չը սպասելով ընթերցողից և հմուտ տեղեակ լինելով կենաց ճիշտ կարեացը, նուիրում են նորան իրանց միայն այն սակաւ ժամերը, որոնք մնում են կերակրող ծառայութիւններից և այլ պարագայութիւններից: Յայտնի բան է, որ այս ծառայութիւնները և պարագայութիւնները գրողի ոտ ու ձեռք պիտի կապեն ու պահեն նորան հետի այն տեղից, որտեղ նորա գրիչը նոյն իսկ այդ ժամանակում ամենահարկաւոր է: Հետագոտեյ մի առ մի այն ձախողակ պայմանները, որոնց մէջ գտնուում է հայ գրողը, մեր նպատակը չէ. մենք ուզում ենք ասել միայն, որ այն սակաւթիւն նամակները, որոնք թարգմանվելով օտար լրագրիչներում քիչ թէ շատ ծանօթացնում են մեզ թիրաքիտ ընկեր հայերի կաց ու նստի հետ, բնաբաւական չեն հայոց խնդրի պրոպագանդական համար, մանաւանդ երբ, ինչպէս վերը տեսանք, ոմանք յօնքը շինելու տեղ աչքն էլ են հանում...

Ուրեմն ինչ պիտի անի այն հայ հասարակութիւնը, որի արտի համար թանկ է հայոց խնդիրը, — այդ մենք ցոյց տուցինք մեր անցեալ նամակում:

Գառ. Եղաբեան

ՆԱՄԱԿ ԱԹԱԼՔԱՆՈՒԹԻՑ

Փետրվարի 18

Ինչպէս թիֆլիսում քաղաքային դոմայի դանձարանի հաշիւը դադարեցրել է թիֆլիսի ամբողջ հասարակութեանը, մեր Ախալքալաքում ևս ամբողջ հասարակութիւնը դադարեցրել է անցեալ տարվայ դեպուտատական հաշիւներով:

Հասարակական առածը ասում է «եւալիկին լաւ ուղիի վարկին»: Անցեալ տարի քաղաքային արկը բաւականին դարկ ստացաւ: Այլ և ձախ մեծ գումարներ էր դուրս գալի օրիկից: — Ի Այն է 720 ռուբլի քաղաքի դեպուտատներին (մինչև 1880 թիւը քաղաքային արկը վճարում էր 100 ռ., իսկ մնացեալը Գաւառական վարչութիւնը):

II. Քաղաքային այգին շինելու համար մինչև 2000 ռուբլի:

III. Քաղաքային բոլոր փողոցները մաքրելու համար 403 ռուբլի:

IV. 700 ռուբլի քաղաքի մի քանի զվարճար փողոցները խնամելի շինելու համար:

Բացի այս մի քանի դոմարները, որոնք հասարակական վճարով որչափ էր քաղաքը արկից դուրս հանելու, քաղաքիս դեպուտատն ա. Յ. Ղազանձեանցը առանց հասարակութեան խորհրդի և համաձայնութեան 500 ռուբլի արկից մնում է, ինչպէս յայտնվեցաւ, իր հաշիւները ներկայ տարուս նորընտիր դեպուտատներին յանձնելու միջոցին: Այս 500 ռուբլուց 200-ը մի ասնի պատճառաւ մտնել է, իսկ մնացեալ 300-ը անյայտ ծախսեր է արել: Բացի այս քաղաքի մաքրութեան 403 ռուբլին օրտեղ է մտնել, ինչ է եղել, ոչինչ յայտնի չէ, իսկ քաղաքը ոչ մի անգամ մաքրված չէ եղել:

Խնամելու 700 ռուբլուց շինված է մօտ քսան սառնի տարածութեանը տեղ միայն գաւառապետի դրան առաջ: Գառ էլ ոչ թէ խնամելու է նման, այլ միայն հող և աւաղ լցրած, ա. Ղազանձեանի ասելով դա միայն 50 ռուբլիով կարելի էր շինել, բայց գաւառապետի հրամանով վճարված է 480 ռուբլի և ուժ է վճարված այս փողը, սա էլ գաղտնիք է:

Պ. պ. հաշտանները երբ մի առ մի քրքրում էին հաշիւները, նամակին դեպուտատն ա. Ղազանձեանը դարձուրած ասում է: — Պարոններ, ինչ էք անում, միթէ կարելի է հաշիւս մանրամասն հայելի, դուք հայեցեք միայն գումարներին և ստորագրեցեք:

Հաշտաններից մի քանիսը, նրա բարեկամները, տեսնելով շատ զեղծուներ և անհաշիւ ծախսեր ա. Ղազանձեանի կողմից, սկսում են պաշտպանել նրան, ինչպէս արել են թիֆլիսի դոմայի ձայնաւորները: Բայց մի կրկնապար պահանջում են մանրամասն հաշիւ: Մենք մեծայոյս

ենք այս վերջիններիս մեծանորութեան վրա, որ սրանք կը պաշտպանեն հասարակութեան հանրը և թոյլ չեն տայ անմեղ քաղաքի փողերը վատնելու մի քանի շահաէջներին:

Հարկը ստիպված ժամանակ կը գրենք մանրամասն այս հաշիւների վրա:

Տեղագի

ՆԱՄԱԿ ՅԱՐԻՑԻՆԻՑ

Փետրվարի 17-ին

Շատ անգամ Բագրատի մէջ յարուցվել է հարց Ֆոսոզէնի առուտուրին մէկ այնպիսի ձեւակերպութիւն տալ, որ յանկարծակի և առանց յայտնի պատճառների չենթարկվի մեծ փոփոխութիւն: Այդ հարցին համակրութեամբ շատ անգամ վերաբերվել է «Մշակը» — իր ընտիր յօդուածներով, բայց միշտ լավել է պատասխան թէ այդպիսի ներքին կապակցութիւններ կազմելը անհնար է. մի և նոյն կրկնում էր և Յարիցին մէջ. Բայց այս անգամ, ընդհակառակը, այդ նպատակով ժողովված ֆոսոզէնի վաճառականները Յարիցին մէջ առաջին իսկ նիստում համաձայնվեցան և հաստատ հիմունքների վրա կազմեցին համաձայնութեան թուղթ և ստորագրելով անմիջապէս գործը սկսեցին և շատ անդալակ վերջ տրվին: Այդ գործին որպէս պարագուխ և որպէս առաջնորդող էր պ. Գրուբէշիչը, որին մեր շրտարակալութիւնը հրապարակապէս յայտնելով պատիւն ունենք: Այն մէկ օրինակ, որից թող բացուցանենք օգուտ քաղեն և իրանց մէջ նըմանապէս կազմեն մէկ այդպիսի կապակցութիւն և ի դուր փոփոխութիւնը կրեն, որոնցից շատ դուրին կերպով կարող են վերծ մտալ, մանաւանդ որ այդ ընկերութիւնը, որպէս մէկ անձն, կարող է պայմանաւորվել չորհրդակերպ ընկերութիւնների հետ:

Այդ ընկերութիւնը իր վերջին նիստում ամսի 16-ին իր գործերը փակելուց աւելացած 401 ռուբլի դրամը որոշեց բաժանելու երեք բաժնեգործական նպատակի. 133 ռուբլի ուսուցիչ, 133 ռուբլի հրէից և 135 ռուբլի հայոց: Հայերը վճարեցին 100 ռուբլի ուղարկել խմբագրատունը պ. Եղաբեանցի յայտնած համակրելի առաջարկութեանը աւելացնելու, — Կ. Պօլսի և Եօնոզէնի մէջ թղթակիցներ ունենալու համար, իսկ 35 ռուբլին մնում է պ. Կրամիշիկեանցի մօտ, առ այժմ դեռ չարուակովող ստորագրութեան մէջ: Այդ ընկերութեան անդամակցողներից երկուսը իրանց մօտ մնացած և ընկերութեանը հասանելիք գրամները ցանկացան իրանց կամեցողութեամբ նուիրել: Ընկերութիւնը ընդունեց նոցա առաջարկութիւնը և անա պ. Տեր-Միքայէլեանց 22 ռ. 50 կ. և պ. Բուճեակեանց 47 ռ. 50 կ. նուիրում են Ա. անի սովորոց:

Խմբագրատան, սոյն նամակին ծնողով ուղարկում են մի հատ բանկի փոխադրական տոմսով, որով պէտք է ստանաք 170 ռուբլի և խնդրեմ գործ դնել ըստ պատահանելոյն և սոյն նամակը բարեհաճեք սպիւնու ձեռք համակրելի թերթի մէջ:

Ա. Չախմախապեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Պաշինո խնդրում է մեզ յայտնել որ այսօր, շարքի օր, փետրվարի 28-ին, երկրպետն ժամը 8-ին թիֆլիսի կրօնօթուում նա կարգադրու է ուսուցիչ լեզուով մի դաստիարակութիւն Ախալքալաքի և Տարիկետանի մասին: Արդիւնքը մի մասը բարեկրթական է:

Մեզ խնդրում են յայտնել որ պ. Աղասի Մեղիք-Այվազեանը նորերում բաց է արել Հաւաքարում մի ընթերցարան:

Մեզ հարողում են, որ Հաւաքարի յօշոփութը անուանված ընդարձակ գերեզմանատունը անհող դրութեան մէջ է: Նրա քանդված պարիսպների միջից մտնում են ամեն տեսակ կենդանիներ, նոյնպէս և ամեն տեսակ գողեր ու աւազակներ, որոնք քանդում, կտորում են մահաբանները քարերը և վանդակները: Ժողովուրդը մի առանձին հաճութեամբ յիշում է այդ գերեզմանատան բարեկարգ վիճակը հանդուցեալ Ներսէսի ժամանակ: Այժմ այդ գերեզմանատանը ոչ հետք փորվում է արագապ Բագրատ-Թիֆլիսեան երկաթուղու համար գիծը, և ի՞նչ փորված հողը ամփ

պարիսպի շուրջը, գրանից կը գոյանայ դարձեալ թուճիկ: նման մի բաւական ամուր հողէ պարիսպ, որ առ ժամանակ կարող է փոխարինել քարէ պարիսպը: Մեռելոցների ժամանակ անդադար ժողովուրդ է մի փողեր գերեզմանատան դրան մուտքի առջև, իրր թէ պարիսպ չինելու համար, բայց այդ պարիսպը երբէք չէ շինվում: Գարձուում ենք առաջնորդարանի և կոնսիստորիայի ուղարկութիւնը այդ բոլոր անկարգութիւնների վրա: Յաւալի է որ մեր հոգեւոր վարչութիւնը այդ աստիճան անհող է և իր ուղղակի պարտաւորութիւնները աւելորդ է համարում կատարելու: Մենք, աշխարհականներս, անդադար պէտք է լինեցնենք մեր հոգեւորականներին նրանց պարտաւորութիւնները:

Հնորակալութեամբ ստացանք պ. Բագրատուրովից նրա ուսուցիչն բրօշուրը «Межевание въ СВЯЗИ СЪ ПОЗЕМЕЛЬНЫМЪ ВОПРОСОМЪ» վերնագրով: Պարսի Բագրատուրով եղել է առաջ «Тифл. Общ. явленіа» լրագրի խմբագիր: Բրօշուրը հրատարակված է թիֆլիսում, Յ. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թվին: Գրքիցի զինը 50 կօպէկ է:

Այս օրերս հրատարակվեցաւ «ԹԻՖԼԻՍՈՒՄ» մի նոր վրացերէն ամսագրի առաջին համարը: Ամսագրի վերնագիրն է «Իմէրի» որ վրացերէն լեզուով նշանակում է «Յրջա»:

Վրաց «Իրօէթա» լրագրը հարգուում է որ իշխան Իվան Մուխրանսկի նուիրեց 500 ռուբլ յօդուա գրագիտութեան տարածման վրաց ընկերութեան և 500 ռուբլ յօդուա անուանական զբաղոցի: Իսկ նրա որդին, իշխան Կոնստանտին Մուխրանսկի նուիրեց 1000 ռուբլ յօդուա վերե լինված ընկերութեան:

«Голосъ» լրագրը լսել է որ շուտով հրատարակելու է Բարձրագոյն հրաման, որով կովկասեան ուսումնարանական շրջանի զպրոցներին կը յատկացվին նոյն արտօնութիւնները, որոնք արված են նոյնանման զպրոցներին եւրօպական Ռուսաստանում ընդհանուր զննորագրութեան պարտաւորութիւնները կատարելու վերաբերութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՂԻՒՍ

Վրացիների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Տրանսվալի մէջ պատերազմող անգլիական զորքերը նորից յաղթվեցան բոքրներից: Չօրքերից շատ քչերը ազատվեցան և նոյն իսկ հրամանատար գեներալ Կօլէյ սպանվեցաւ այդ կուրի ժամանակ: Այժմ անհերք է դարձել, որ չափազանց դժուար է ճիշտ Տրանսվալի բոքրների ազատամբռութիւնը և այդ դժուարութիւնները յաղթելու համար անգլիական կառավարութեանը միայն մի ձանապարհ է մնացել՝ ձանաչել Տրանսվալի անկախութիւնը: Այս դէպքում ազգային ինքնասիրութիւնը պէտք է մի կողմ թողնել, որովհետեւ այժմ շատ դժուար է նրան բաւականութիւն տալ և մի և նոյն ժամանակ այդ գործը պատերազմական մեծ ծախսերի հետ է կապված: Պահպանողական կուսակցութիւնը անկասկած օրուա կը քաղի այդ դէպքից և կը մեղադրի կառավարութեանը, որ նա բրիտանական զահի արժանաւորութիւնը չէ պաշտպանում հարաւային Աֆրիկայի մէջ: Պահպանողականները հազիւ թէ ու շարքութիւն դարձնեն այն հանգամանքի վրա, որ այժմեան դժուարութիւնների պատճառը լօրը Բեկօնսֆիլդի քաղաքականութիւնն է:

Իսկապէս Գլադստօն կարող է լռեցնել ընդդիմադրական կուսակցութեանը: Եթէ նա Տրանսվալի հարցը յանձնէ համայնքների ժողովի քննութեանը և յայտնէ, որ ինքը այդ գործի մէջ կը կատարի միայն փողի հրահանգները և կարգադրութիւն

ները, նա այլ ևս պատասխանատու չէ լինի: Համայնքների ժողովը երեւի կը հասկանայ, որ այժմեան հանգամանքները անհրաժեշտ են դարձնում Տրանսվալի անկախութիւնը և դրա պատասխանատուութիւնը իր վրա կառնի: Բացի այդ ժողովը կը քննէ Բեկօնսֆիլդի քաղաքականութիւնը անգլիական գաղթականութիւնների վերաբերութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզից լրագրիչներին գրում են, որ փետրվարի 27-ին, Լուի Բլանի նախագահութեամբ, կայացաւ հանդիսաւոր կերպով գրականական և երաժշտական երեկոյի պատու վիկտոր Հիւգօի:

Վրացիներին գրում են հետեւեալը: Ասում են և շատերը սպասում են, որ Բուճեակեան թատերութեան կը վերափոխվի: Այս բանի համար նշանակված է մայիսի 22-ը, իշխանութեան անկախութեան հրատարակելու տարեդարձը: Պաշտօնական «Romanul» լրագիրը ապացուցանում է, որ դրան եւրօպական պետութիւնները չեն ընդդիմադրի, այն ինչ երկիրը թաղաւորութեան անուան սեփականացնելով, մեծ նշանակութիւն կը ստանայ իր միջազգային դիրքը բարձրացնելու համար:

Բ. Կուռը Կ. Պօլսուով սկսեց հալածել հայերին: Նրանց արգելված է հայոց պատմութիւնը և աշխարհագրութիւնը ուսուցնանք: Այդ առարկաների վերաբերութեամբ խօսող բոլոր հեղինակութիւնները արգելվում են: Ռատիկանութիւնը պապիքներին վրա ևս արգելք դրեց, որոնց արկերի վրա նկարված են հայոց հին թագաւորներից մէկը և Հայաստանի ողին, որը արտասուքներ է թափում աւերակների վրա: Բացի դրանից հայերին արգելում են իրանց եկեղեցիների զանգակներն ածել, ի բաց առնելով միայն, երբ հարկաւոր է հրդեհի մատին նշան տալ: Արգելվում է նոյնպէս յօդուա բարեգործական հիմնարկութիւնների վեճակախաղեր կազմել առանց Բ. Կուռից նախապէս թուղթութիւն ստանալու: Վերջապէս, չը նայելով լրագրիչների հերքումներին, Լուրեր են տարածված սրբազան Ներսէս պատրիարքի շուտով աքսորելու մասին: Մի խօսքով, այժմ թիւրքերը կամ Բ. Կուռը նոյնքան զրգուած են հայերի դէմ, որքան յոյների դէմ: Կարողութիւնը չունենալով հալածել յոյներին, Բ. Կուռը հալածում է հայերին, որովհետեւ նրանք ոչ մի դեպատմութեան հովանաւորութիւնը չեն վայելում: Այս պատճառով մաւրոզ է Խօսել այն բանի մասին, վերջացնում է «Новое Время» լրագրի թղթակիցը, որ հայերը պատերազմ են ցանկանում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՍԵՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 26 փետրվարի Կ. Պօլսից հարողում են, որ դեպատմութեան միջնայն ընդունեցին Գօշէնի և Հաջիէլի կարծիքը, որով նրանք պէտք է բաւականանան թիւրքիայի առաջարկութիւնների ընդունելով, առանց այդ առաջարկութիւնները քննադատութեանը ենթարկելու և իրանց կողմից պէտք է հասցնեն այդ առաջարկութիւնները իրանց կառավարութիւններին:

Կ. ՊՕԼԻՍ, 25 փետրվարի Բ. Կուռը հրամայել է զօրքերի կրկնակի կործանով շրջափակել այն գաւառները, որտեղ յայտնվել է ժանտախտը և այրել ժանտախտով վարակված բոլոր քաղաքները և զիւղերը: ԳՈՒՐԻՆ, 25 փետրվարի: Արդէն կալաւաւորված են 18 մարդիկ: Կալաւաւորվածներից մինը, Բօյտօն, կալաւաւորված լիզայի զվարճար կազմակերպող է համարվում:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 25 փետրվարի: Գուրիայի կալաւաւորված բանկի գրաւական թերթերի կուրսը 90 ռ. 25 կ. է:

Խմբագիր—հրատարակող ԳԲԻԳՈՐ ԱՐՏՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ОБЪ ИЗДАНИИ

съ апрѣля 1881 года въ г. Тифлисъ еженедѣльнаго юридическаго журнала

ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ

Журналъ будетъ выходить по ЧЕТВЕРГАМЪ, въ размѣрѣ до 2-хъ печатныхъ листовъ, по слѣдующей программѣ:

- Отдѣлъ I. Статьи по теории и практикѣ права и судопроизводства.
- Отдѣлъ II.
 - а. Извлечение изъ приказовъ о важнѣйшихъ назначеніяхъ по вѣдомству Юстиціи въ Имперіи.
 - б. Перечень и краткое изложеніе важнѣйшихъ распоряженій и узаконеній правительства.
- Отдѣлъ III.
 - а. Краткіе отчеты о засѣданіяхъ въ судахъ Кавказскаго Намѣстничества. Въ случаяхъ особенно важныхъ—стенографическіе отчеты будутъ издаваться въ видѣ особыхъ приложений къ журналу.
 - б. Тезисы изъ руководящихъ рѣшеній Тифлисской Судебной Палаты по дѣламъ, разрѣшеннымъ ею въ кассационномъ порядкѣ. Въ случаѣ надобности здѣсь-же будетъ помѣщаться и текстъ самыхъ рѣшеній.
 - в. Особенно интересныя рѣшенія гражданскихъ судовъ Кавказскаго Намѣстничества. Преимущественно тѣ рѣшенія, коими разрѣшаются какія либо вопросы права и судопроизводства, вызванныя мѣстными особенностями Кавказскаго края.
 - г. Корреспонденціи юридическаго содержания.
- Отдѣлъ IV. Перечень новыхъ книгъ юридическаго содержанія. Редакція по возможности будетъ представлять и краткіе отчеты объ этихъ книгахъ.
- Отдѣлъ V. Слѣсь. Мелкіе случаи изъ судебной жизни и практики.
- Отдѣлъ VI. Судебный указатель. Резолюціи Тифлисской Судебной Палаты по дѣламъ апелляціоннымъ и кассационнымъ.
- Отдѣлъ VII. Тезисы изъ вновь выходящихъ рѣшеній Кассационныхъ Департаментовъ Сената.
- Отдѣлъ VIII. Объявленія.

Журналу обѣщали свое сотрудничество, сверхъ многихъ лицъ судебного вѣдомства: Ф. К. Бакало, О. А. Быховъ, В. М. Горбовскій-Заранекъ, Н. А. Дительштетъ, В. П. Канатовъ, П. В. Макалинскій, Я. И. Гашетъ, В. А. Селитренниковъ, П. П. Соколовъ, Е. Д. Стрѣльбицкій, А. С. Френкель и др.

Редакція журнала—по Ново-Бebutовской ул., д. № 6.—Администрація (для приема подписки, объявленій и розничной продажи)—близъ Головинскаго проспекта, по Безыменному пер., д. Тамашева.—Подписная цѣна на журналъ, съ доставкой и пересылкою, на годъ—10 р., на 9 мѣс.—8 р. 20 к., на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к.—Подписаться можно съ 1-го числа каждаго мѣсяца.—Отдѣльные номера—по 25 к.—Объявленія, казенныя и частныя, по таксѣ за занимаемое мѣсто.—Иногородныхъ просить обращаться исключительно въ Администрацію журнала.

Издатель А. Френкель, присяжный повѣренный. Редакторъ А. В. Стенановъ

ՀԵՄՈՐՈՒԿԵԿՆԵ ԲՈՒՍԵԿՆԵ ՀԵՂԵՆԻԹ՝ փորձված և առաջարկված պրոֆեսոր բժշկի ԿՐԸՏԿՈՎՍԿՈՒՅ շատ գեղեցիկ միջոց է ԱՏՏՄՈՒՐՍԻՔԱՆԵՐԵՆ ՅՆԻԹԻ ղէմ, մաքրում է և շտապնում է ԵՐԻՒՆԸ, վերականգնում է ՄԵՐՄՆԻ ընդհանուր հարմունքան, մանաւանդ՝ առաջարկվում է Հիմարոի և Իպախունդրիա ՀԻԵՆԻՈՒԹԵՆԵ ղէմ: Մի շնոր, գործածելու խՐԸՏԵՆԲՈՎ, 1 ր. 80 Կ.: Օտարաբարդաբացիք ուղարկում են ՓՕՍՏԻ ծախար: Ծախվում է Ռուսաստանի ԲՈՒՈՐ ԴԵՂԵՆԵՆԵՐԻ մէջ և ղեղերի պահանջները մէջ: Պահեստը Մօսկվայում է, Ե. Մատենոէ յնի մօտ, Տիբրսկայա փողոց: Կիշնէօիլի մէջ Կայուշանսկու և Բրայունշտէ յնի մօտ: Վարչակայի մէջ Ա. Փ. Գալլէի մօտ: 21—25 (5)

Մինչև այժմ չեղած ԵԿԵՆՉԻ ԻՎԻ, ԲԺԻՇԿ ԸՄԻԹՏԻ, որ կատարելագործված է բժշկի ՄԵՎԻՎԻԹԻ ԴԵՅՉԻՅ: Ըողջացնում է ամեն տեսակ խոլերիկներ, եթէ նա բնական չէ: ԵՐԵՒ ԲՈՒՐԻ ԸՍՏԱՆԱՐԵՅ յետոյ ուղարկվում է ՄԻՇՇԱՅԻ ԻՍԿԻՅ, մանրամասն խՐԸՏԵՆԲՈՎ, գործածութիւն մասին: Եյր իւրը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԵՆԵՆԵՐԻՅ և Ելէքսանդր ՎԵՆՅԵԼԻՅ, Կազանսկայա փողոց № 3: 33—52

ՎԱՃԱՌՄԱՆ ԳՆԵՐՈՎ ձևովայ պատճեններ 12 ր., Ֆուգիաններ 2 ր. 50 Կ., զլխարկներ 1 ր., մատուցարաններ 5 կոպէկ, ամաններ հատը 12 Կ., հնդկական բրինձ 10 Կ. Փունը: Անդրկան կոնֆեկաներ 40 Կ., իսկ թէյ, որի ֆունը ամեն տեղ 2 ր 50 Կ. արժէ, 1 ր. 80 Կ. է ծախվում ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՍՆՈՒԹԻ ՄԷՉ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՈՒՄ: 9—12

ՎԱՐՉՈՎ Է ՏՐՎՈՒՄ ԲՕԼՇՈՑ ԿՐԻՎՈՑ ՓՈՂՈՑԻ վրա զբանջող խէրոյինանցի սեփական ՏԱՆՎԵՐԻՆ ՅԱՐԿԸ: Պայմանների մասին ԳԻՄԵԼ Պ. ԽԵՐՕԻՒՆԵԱՆՑԻՆ, Միխայիլովսկայա փողոցի վրա № 56: 1—4

ՎԱՐՉՈՎ Է ՏՐՎՈՒՄ ՍԵՐԲԵՐԵԱՆԵՐԻ ՈՍԿԵՐԻՉԻՍՆԱՆՈՒՄ ՓՈՂՈՑԻ վրա զանազան խէրոյինանցի սեփական ՏԱՆՎԵՐԻՆ ՅԱՐԿԸ: Պայմանների մասին ԳԻՄԵԼ խէրոյինանցին, Միխայիլովսկայա փողոցի վրա № 56: 1—4

Չը նայելով մարտի աւելանալու ապրանքները առաջայ գնելով կը ծախվեն. ԿՈՆԳՈՒԹԻՅ 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիւսնայի ԿԱՅՍՍՈՒ 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և ԱՍԵՆԱԼԱԻ ԹԻՅ 2 ր. առանց թղթի: Անդրկան ղեկոյիններ 4 ր.—40 ր. Հրացաններ 20 ր.—200 ր. Անդրկան խանութի մէջ, Գործակալութիւն ԲԱՐՆԱԲԻ ԹԱՄԱԲԵՐԸ, ջմանի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, ջուրոյի ԳՐԻՉՆԵՐԸ և կիսարան կահույն շոխոյի ծախելու համար, որոնք վարելի հանդիս ժամանակ ունէ մեզոյ ստացան: ՀՈՏԱԼԻՅ ԹԻՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 Կ. և ամենաւաղը 2 ր. 30 Կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անդրկան խանութի մէջ: Ամբողջ հազարաւ 15 ր., կոնֆեկաներ հազի ղէմ 60 Կ. Փունը: 31—100

- Կենտրոնական գրախնամանոցում ի միջի այլոց փաճառվում են հետևեալ գրքերը:
1. Արուեստ երկայնակեցութեան, որ է սողոյ, երկայն ու երջանիկ ապրելու ուսումը: Շար. բժ. Փոփոյիչ. գ. 1—50 Կ.
 2. Մօրիս կամ աշխատութիւն, ի պէտս նորնական դպրոցաց: Հեղ. տ. Գառնօ, գ. 1 Կ.
 3. Հռչակաւոր ոճիրը: Պրէնկիլիէ Մարքիզոսի: Պատկեր. վէպ. Աղ. Դիւմա գ. 1 Կ.
 4. Դիւարնակ բլուր: Վէպ. Էօթէն Սիւ 2 հ. գ. 2 Կ.
 5. Խորհրդաւոր կղզի: Հեղ. Ժիւլ Վերն 3 հ. բովանդակութիւն ա. հ. Օդապար նաւարկելու. ր. հ. Ընկեցիկ մարդը. գ. Կղզոյն Գաղտնիքը գ. 3 Կ.
 6. Աշխարհի շրջան ութսուն օրում մէջ: Հեղ. Ժիւլ Վերն գ. 1—50 Կ.
 7. Բարիկի յԱմերիկա: Հեղ. Է. Լաբուէ 2 հ. գ. 2 ր.
 8. Պարոյր կամ առնուն Կիտուէի. գրեաց Տեր. Գ. Պատկանեան գ. 50 Կ.
 9. Թուղթ Մարտի Աշաբէգեան Հայոց Աշխարհի Ազգի և եկեղեցու, ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական տէր Կերսէս Պատրիարքն հապոյց գ. 2 ր. 25 Կ.
 10. Հ. Ղ. Անիշանեան: Տեղագիր Հայոց Մեծաց գ. 2 ր. 50 Կ.
 11. Նուէր Կաղանդի: Պատկերազարդ մանկանց ընթերց. Նշան Պերպերեանի գ. 65 Կ.
 12. Բնարիկ մանկան. Աղէք. Արարատեանցի գ. 40 Կ.
 13. Տարերք իմաստասիրութեան, ընդարձակ Հ. Ա. Վ. Գուրգենեան 5 հատոր գ. 3 ր. 50 Կ.
 14. Խորհրդական բերդը: Վիպասանութիւն Ֆօթեր օր. Գաղիացոյ գ. 1 ր.
 15. Ընտիր Հայկազունք: Պատկերազարդ կենսագրութիւնը գ. 2 ր. 75 Կ.:

Նշոյ տեղը փաճառվում են հայերէն, ուսերէն և օտար լեզուների դասագրքեր, դասական պիտոյներ, աշխարհագրական քարտէզներ, նկատողական ուսման համար պատկերներ, վիպասանութիւններ, թատրոնական պիէսներ, ուղեցոյցներ, բառարաններ, տեղեկացոյցներ և այլն:

Օտարաբարդաբացիք իւրեանց պահանջները փողի հետ պիտի ուղարկեն հետևեալ հասցէի. Թիֆլիս, Եւ. Կենտրոնալու Կնիշնոյ Թորգու. ճանապ. ծախք պէտք է աւելցնել իւրաքանչիւր ր. 10 Կ.:

ԱՆԼԻՑԵԼԵՆ ԵՏԵՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՏԵՄՆԵՐՈՑԺ ԲԺՇԿԻ Լ. Ի. ԻՄԵԼ ՀԵՅԻՄԻ թոյլ են սուած Մօսկվայի ԲԺՇԿԵԼՆԵ ՓԵԿՈՒՄՏԵՏԻՅ: Եյր միջոցները մեծ ԳՈՐԾԵԻՐՈՒԹԻՒՆ ԵՆ գտել և առաջարկվում են իբրև ԵՄԵՆՈՒԼԵՒ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առամների համար: Կարելի է ԵՏԵՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆԵԼՈՒՅ, սառեցնում են ԼՕՐՉՈՒՆԻՒՄ ԲԵՐԸ և վառ ՀՈՏԻ առաջն են ստնում:

Ետամնարոյժ բժիշկ Ե. Ի. Եղիշէյի ԳԼԽԵԼՈՐ ՊԸՀԵՍՏԸ զանվում է ՄՕՍԿՎԵՅՈՒՄ, ԿՈՒՉՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐԸ, ՍՕԿՈՒՈՎԻ տանը:

ԹԻՖԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՑՈՒՐԻՆՈՎԻ ԿՈՎԿԵՆՆԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԸՀԵՍՈՒՄ: Ծախողների ՆՇՆԵԼՈՐ ԶԵՂՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ: 10—30 (11)

ՍԵՐՄԵՐ պարտիկ բոյսերի և ԾԱՂԻԿՆԵՐԻ բոլորովն թԱՐՄ ստացված են Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան գործակատարի խանութի մէջ: Գուղինսկայա փողոց № 11: ԼԱՐՇԵԻ խանութ: Սերմերի ցուցակները ձրի են արվում: 2—10

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՎԱՆ ամեն տեսակ ԳՈՐԾԻՔՆԵՐ մինչև Ապրիլի 20 փաճառվում են շատ էփան գնով: Հարցներ կենտրոնական գրախնամանոցում (Արժուոնու գալէրէյում): 2—3